

սրտիս խստագոյնս և ի վտանգս հոգւոյս և գթա՛ յիս՝ տէր Աստուած և զերծո՛ զիս յորոգայթէ՛ յայնմանէ՛, ի ժահահոտ խոր-խորատէ՛ և յանբաւ անդնդէս. քանզի հեղձուցանէ՛ զիս անողորմ առանց օգնականի ժահահոտութիւն մեղաց իմոց՝ այլ հան զիս տէր, ի գործոյս մեղաց և առաքեալ զհոգիդ սուրբ՝ զի հրատեսակ տեսլեամբ խլեսցէ՛ յինէն՝ զիշալից սերմանս բռնասարկուին և առաջնորդեսցէ ինձ յարդարութիւնս. եւ առաւելապէս ապաշխարութեամբ հանդերձ արժանաւորապէս ըստ մեղաց իմոց՝ զի ջնջեսցի ձեռագիր յանցանաց իմոց. որպէս զի հանգիցէ երեկոյին լալիւնս իմ և հանդիպեցայց առաւօտուն ցնծութեան. պատառեսցի քուրձ սգոյս իմոյ և եկեսցէ յիս ինդութիւն ուրախութեան քոյ։

ԿՐՕՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՐԿՐՈՐԴ ՄԵՍ ԴԻԻՑԱԶԸ

(Վարդանանց յիշատակի առթիւ)

Ա.

Մեր հին պատմութեան ամենանշանաւոր և միանգամայն հանրածանօթ ժամանակներից մէկն անտարակոյս Երդ դարի կրօնական — աղգային պատերազմն է, որի մէջ իբրեւ մի լուսաւոր աստղ փայլեցաւ մեծ սպարապետ քաջ Վարդան Մամիկոնեանը։ Զկայ հայ մարդ որ Վարդանի անունը լսած չլինի, նորա անմահ յիշատակը տարին մի անգամ օրհնութեամբ նորոգւում է Աստուծոյ տաճարում և դպրոցական պատերի մէջ և յորդորում է մեզ ջերմ սիրով ոիրել ու գգուել այն Եկեղեցին, որի փրկութեան համար զոհ գնաց մեծ նահատակը իւր՝ անմուռանալի ընկերների հետ։

Սակայն Վարդանանց ժամանակը կրօնական պատերազմի լոկ մի շրջանն է ներկայացնում. նորան շուտով յաջորդեց երկրորդ՝ ոչ նուազ փառաւոր շրջանը — Վահանեանց ժամանակը։ Մեղ թւում է թէ Վահան Մամիկոնեանի գործունէութիւնը դեռ արժանապէս գնահատուած չէ մեր նոր գրականութեան մէջ. բանասէր ու բանաստեղծ Աւարայրի դիւցազնի վսեմ անձնաւոր-

բուժեամբ յափշտակուած՝ ասեռ թէ մոռանում են որ նորա պաշտպանած սուրբ գործը վերստին մեծ վտանգի ենթարկուեցաւ, գուցէ նաեւ կորստեան մատնուէր, եթէ Վահանի հերոսական քանքերը չլինէին:

Սովորաբար պատմական անձոնց նշանակութիւնը չափուումէ այն, գոյությունը թիւններով, որոնց հանդիպում են նոքա իրանց գործունէութեան ասպարիզում: Որքան առաջ եկած արգելքները մեծ են, նոյնքան մեծ է և գործող անձի նշանակութիւնը, եթէ այդ արգելքներին յաղթելով՝ ցանկացած նպատակին հասնում է: Այս կողմից Վահան Մամիկոնեանը չէ կարող մեր զարմանքը չշարժել: Կորովամտութիւն, հնարագիտութիւն, հոգեկան արիւնք, անյողդողդ հաստատամտութիւն, այս բոլորը ներշնչուած ամենամաքուր հայրենասիրութեամբ և կրօնասիրութեամբ, — ահա այն զէնքերը որ այս մեծ մարդը գործ դրեց հակառակորդների ահագին ոյժերի դէմ, և վերջապէս յաղթանակը տարաւ:

Բայց թողնենք որ դէպքերը խօսին և տեսնենք նախ թէ ինչ վիճակի մէջ էր Հայոց երկիրը, երբ Վահան ասպարէզ եկաւ գործելու:

Ով որ եղիշէն կարդացել է, — և ով չէ կարդացել այս ոսկեղինիկ մատեանը, — մտաբերում է անշուշտ որ Յազկերտի, իւր գիտաւորութիւնը Հայոց նկատմամբ յաջողութեամբ գլուխ տանելու համար հարկաւոր համարեց նախ Հայաստանի արեւմտեան և հիւսիսային դրացիների — Յունաց և Հոնաց զօրութիւնը խորտակել, որպէս զի նոցա կողմից անկասկած լինի, և ապա կատարեալ վստահութեամբ իւր հզօր բանակը ուղարկեց Հայոց վերայ: Սակայն Աւարայրի ճակատամարտը և նորան յաջորդող դէպքերը ցոյց տուին որ Հայերը գիտեն պաշտպանուիլ, երբ խնդիրը իրանց կենսական շահերին է դալիս. նոքա բարոյապէս անընկճելի մնացին և գոռոզ Յազկերտը ստիպուեցաւ զիջանել և թոյլ տալ նոցա պահելու իրանց կրօնը և հայրենի սովորութիւնները: Բայց այդ լուկ կարճժամանակեայ զինադադար էր: Տիգրանի արքունիքը տեսնելով որ բուռն զօրութեամբ բան չկարողացաւ առաջացնել, իւր քաղաքականութիւնը փոխեց, զէնքը մի կողմ դրեց և բարոյական միջոցները ձեռք առաւ: Յազկերտի յաջորդը՝ Պերդ մարզպան կամ կուսակալ

կարգեց Հայոց վերայ Ատրվշնասպ պարսիկ իշխանին. նորա հետ հայրենիք արձակուեցան ուխտապահ հայ նախարարները՝ տասներկու տարի բանտի կապանքների ու պահգիտութեան մէջ մնալուց յետոյ (463ին)։ Նոր մարզպանը անմիջապէս սկսեց գործել։ Իւր ստացած հրահանգների համեմատ՝ նա ետեւէ եղաւ վարպետութեամբ մարդկանց մտքերն ու սրտերը որսալ ամէն տեսակ պատիւներ ու խոստումներ շռայլելով, որով և յաջողեցաւ շատերի կրօնական եռանդը թուլացնել և անզգալի կերպով տարածել նոցա մէջ արեգակի ու կրակի պաշտօնը։ Դժբաղդաբար օգնականների պակասութիւն չունեցաւ նա իւր ձեռնարկութեան մէջ։ Կային մի քանի ուրացող նախարարներ Վարդանանց ժամանակից մնացած, որպիսի էին Գաղիշոյ Խորխոռունին, որ երբեմն Վասակի ջերմ կուսակիցն էր եղած, և Գրիհոն Սիւնին՝ Վարազվազանի յաջորդը Սիւնեաց իշխանութեան մէջ։ Սոքա այժմ արձակ համարձակ Պարսից կողմն էին բռնում և իրանց խորհրդներով ու գործակցութեամբ մարդպանին թե ու թիկունք լինում։ Եւ ո՞վ չգիտէ որ դաւաճան ազգակիցը միշտ աւելի է վնասում իւր հայրենակիցներին քան թէ օտար թշնամին։ Յաւալին այն է որ սոցա տուած հարուածներին դիմագրող չկար։ Աւարայրի ճակատամարտում կռուող քաջերը մեծ մասամբ մեռած էին, իսկ նոր սերնդի մէջ Վարդանանց ժամանակի հոգին չկար։ Յազկերտի անգութ հալածանքը և Պերոզի բարոյական ճնշումը իրանց արդիւնքը տուել էին։ Ականաւոր տոհմի իշխաններ ամէն օր տեսնում էին թէ ինչպէս ստոր ու անարժան անձինք պատիւների ու պաշտօնների էին հասնում, տանուտիրական իշխանութեան ու կալուածների տէր դառնում հաւատուրացութեան համար, իսկ իրանց ծառայութիւնները բանի տեղ չէին դրուում միմիայն նորա համար որ իրանց հայրենի կրօնին հաւատարիմ են մնում. ուստի և ասպարիզից քաշուած՝ առանձնացած կեանք էին վարում, գոհ լինելով որ գոնէ թոյլ էին տալիս իրանց մաքուր խղճով ապրել. « Ի հոգեսպանութենէ մոլեկան թագաւորին (Պերոզի) և ի կատաղութենէ ամպարշտեալ ժամանակի իշխանացն՝ (Հայոց) որպէս նապաստակք ի սլացմանէ գիշակեր արծուեաց ի ծերպս վիմաց և կամ ի մացառուտ տեղիս մայրեաց զօգեալք թաքչէին », ասում է ժամանակակից պատմագիր Ղազար Փար-

պեցին։ Այս ընդհանրական անտարբերութիւնը հարկաւ խրախուսում էր Պարսից աւելի ու աւելի համարձակ գործելու։ Նոքա տեսնում էին թէ ինչ որ չյաջողեցաւ անել մի ժամանակ բանտն ու սուրը։ այժմ հեշտութեամբ գլուխ էր բերվում լոկ պատիւների ու մեծութեան հրապոյրներով։ Եւ ինչպէս միշտ սլառահոյժ է այդպիսի դէպքերում։ այն մարդիկը որոնք անբարոյականացուցիչ միջոցները իբրեւ գլխաւոր զէնք էին գործ դնում իրանց նպատակներին հասնելու, Հայոց վարք ու բարքի թուլութիւնը տեսնելով՝ ամեն տեսակ նախատինքներ ու անարգանքներ էին թափում նոցա գլխին։ Որովհետեւ, ցաւելով ասում է նոյն ականատես պատմագիրը, արդարեւ «լաւութիւնը հեռացել էր այդ ժամանակ Հայոց աշխարհից, իմաստութիւնը կորել, քաջութիւնը մեռել, քրիստոնէութիւնը թաք կացել։ Հայոց զօրքը՝ որ մի ժամանակ ուրիշ ամէն զօրքերից քաջանուն էր երևում և զօրագլուխներն անուանի ու յաղթող, այժմ ամէնքը խաղբ ու խայտառակ էին անում նոցա։ Նոյն իսկ Պերոզ թագաւորը բոլոր ատենի առաջ յայտնապէս նախատում էր Հայոց, ասելով թէ՝ «եթէ իմ տէրութեան մէջ անպիտան և յետին գունդ կայ՝ Ասորին է, բայց Ասորուց էլ յետինն ու անպիտանը Հայն է»։

Այս տագնապալից ժամանակում մի անձ կար, որ ամէն վրտանգ աչքն առած՝ ձեռքից եկածին չափ աշխատում էր կատարուած չարքների առաջն առնել։ այդ անձը Գիւտ կաթողիկոսն էր։ Ս. Սահակի և Մեսրոպի արժանաւոր աշակերտներից մէկը, որ եօթանասուն տարեկան հասակում կանչուել էր Հայոց եկեղեցու բաղդին առաջնորդելու (465 թ.)։ Շատ չար ու բարի էր տեսել Գիւտ իւր կեանքում։ Պատանեկութիւնը անցել էր Արշակունեաց թագաւորութեան հոգեւարքի տարիներում, որի մահն էլ տեսնելու դժբաղդութիւնն ունեցաւ։ ականատես ու գործակից էր եղել Հայոց մտաւոր շարժմանը, որի նպատակն էր ազգի գոյութիւնը ապահովել քաղաքական կեանքի անկումից յետոյ։ տեսել էր Եկեղեցին մի անգամ փորձութեան մէջ ընկած և այդ փորձութիւնից յաղթութեամբ դուրս եկած։ այժմ էլ տեսնում էր նոյն Եկեղեցին վերստին վտանգի ենթարկուած, և ինքը աւանդ մէն մենակ էր մնացած այս վտանգի առաջ, լոկ իսկն ու Աւետարանը զէնք ունենալով

եկեղեցու թշնամիների դէմ: Հաղիւ մէկ — երկու հոգի կային, որոնց առաջ կարող էր իւր ցաւած սիրտը բանալ: Բարիկ Սիւնին և Առնակ Ամատունին, Վարդանի ընկերներից մէկը, որին բանդի կապանքները աւելի ևս հաստատել էին իւր կրօնական համոզմունքների մէջ, Սոցա հետ յաճախ տեսնուում ու խորհրդակցում էր կաթողիկոսը, փրկութեան միակ հնար գտնուեցաւ ազգը Յունաց օգնութեամբ ապստամբեցնել: Այս նպատակով երկու անգամ ծածուկ պատգամաւորութիւն ուղարկուեցաւ Լեոն Ա. կայսեր. բայց գործը ձգձգուեցաւ և ապրստամբութեան խորհուրդը գլուխ չեկաւ: Այն ժամանակ կաթողիկոսը վճռեց ասպարէզ գալ և համարձակ մաքառել վերահաս չարիքի դէմ: Ի՜նչ սրտաշարժ տեսարան պիտի ներկայացնէր մի ութսունամեայ պատկառելի ծերունի, որ իւր հօտի մէջ պտտելով թուլացեալներին քաղցրութեամբ յորդորում էր հայտնատուն մնալ իրանց հայրենի կրօնի մէջ, և ուրացեալների դիմին բարկութեան շանթեր էր թափում: Սոցա պարագլուխը Գալիշոյ Խորխուռունին չկարողանալով այդ նախատինքները տանել, ուրիշ աւելի լաւ միջոց չգտաւ այդ անպատուութեան վրէժն առնելու, բայց եթէ գնալ Պերողի առաջ մատնել կաթողիկոսին, ներկայացնելով նորան իբրեւ մի մեծ խոչընդոտ կրօնափոխութեան գործը յաջողութեամբ գլուխ տանելու, միանգամայն և իբրեւ Յունաց կուսակից, որ ձեռքի տակից աշխատում է ապստամբեցնել Հայոց Պարսից տէրութիւնից: Գիւտ կանչուեցաւ Դուռը և կաթողիկոսութիւնից զրկուելով վերագարձաւ Հայաստան (475):

Բ.

Կաթողիկոսի անկմամբ Գաղիշոյ և իւր համախոհները կարծես այլ ևս ոչ մի արգելքի հանգիպելու չէին իրանց անարժան ձեռնարկութեան մէջ: Յուսահատութիւնը տիրել էր ամէնի վրայ և քրիստոնէութեան գործը այնուհետեւ բոլորովին կորած էր համարւում: Սակայն նախախնամութիւնը այլապէս էր տնօրինել: Հայոց եկեղեցու փրկութիւնը սիտի գար դարձեալ այն փառաւոր տոհմից, որ միանգամ ազատել էր նորան վերահաս վտանգից: Վարդան արու ղաւակ յթողնելով Մամիկոնեան տոհմի տանուտէրութիւնը Հմայեկի մահից յետոյ անցաւ այս

վերջինի որդոց, որոնց Վասակ Սիւնին մատաղ հասակում խլել էր դայեակների ձեռքից և ուղարկել էր Պարսից դուռը, կամե- նալով այսպիսով Յազկերտին մի հաճոյական բան անել: Գիշ յե- տոյ թագաւորը Վրաց Աշուշա բռնելի միջնորդութեանը զիջա- նելով Մամիկոնեան մանուկներին ազատութիւն շնորհեց, և բռնելը տարաւ յանձնեց նոցա իրանց Ձուիկ մօրը, որի Անուշ- վում քրոջ հետ ամուսնացած էր Աշուշան *): Այնտեղ Վրաստանում անցան երեք եղբայրների՝ Վահանի, Վասակի և Արտաշէսի մանկութեան տարիները իրանց իմաստուն մօր խնա- մակալութեան ներքոյ, որ «եղև կին անուանի և առաւելեալ ամենայն լաւ և մտաւոր մասամբք յամենայն կանայս ի Հայաս- տան աշխարհի» • իսկ կրտսերը Վարդ մնացել էր դայեակների մօտ ծայոց աշխարհում: Գերեալ նախարարների դարձից յե- տոյ՝ Նոբա էլ եկան Հայաստան և Գիւտ կաթողիկոսի կրթու- թեան խնամքը վայելեցին Ներսէս և Հրահատ Վամսարականե- րի հետ **), որոնք յետոյ Վահանի աջ բազուկներն եղան: Շու- տով Մամիկոնեան եղբայրները իրանց խելքով և յաջողակու- թեամբ ամէնի ուշադրութիւնը իրանց վրայ դարձրին, մանա- ւանդ անդրանիկը Վահան, որ իւր խոհեմութեամբ և արքունի ոսկեհանքի գործի մէջ ցոյց տուած հաւատարմութեամբ այն- չափ սիրելի եղաւ Պարոի գործակալներին, որ նորա համբաւը մինչև Պերոզի ականջը հասաւ: Բայց իւր նախնեաց գործերի յիշատակը, որոնք այնքան նեղութիւններ էին պատճառել Պար- սից, արգելք էին լինում նորան արժանաւոր պատիւներ ըն- դունելու. մանաւանդ որ Գաղիշոյ և իւր արքանեակները ան- դադար վախեցնում էին Պարսից աչքը ասելով. «Երբ և իցէ սա էլ նոյն խռովութիւնները պիտի հանէ ձեր գլխին»: Վա-

(*) Հին ժամանակ հայ կանայք իրանց բարեմասնութիւնների համար մեծ յարգ ունէին մեր հիւսիսային գրացիների աչքում, ուստի և Վրաց իշխա- նազունները յաճախ խնամութիւն էին անում հայ իշխանական տոհմերի հետ: Այսպէս այդ ժամանակները, բացի Աշուշայից, որ Հմայեկի քննա- կալն էր, Վրաց Վազգէն թագաւորն էլ ամուսնացած էր Վարդանի առաքի- նի դստեր՝ Վարդենի—Անուշանի հետ, որին յետոյ նահատակեց:

(**) Յոբա Վարդանի երկրորդ փեսայի՝ Արշաւիր Վամսարականի որ- դիքն էին:

հան իւր չարախօս ազգակիցների բերանը կարկելու և Պարսից կասկածներից ազատուելու համար՝ գնաց Դուռը, քրիստոնէութիւնն ուրացաւ և Վարդ եղբօրը այնտեղ պատանդ թողնելով՝ դարձաւ իւր երկիրը։ Բայց այս հաւատափոխութիւնը, որ իւր հօրեղբօր նման երեսանց էր ընդունել, մեծ մտառանջութեան մէջ ձգեց նորան, և նա այնոհնչեմով յարմար առթի էր սպասում ազատելու իւր անձը խղճահարութիւնից, միանգամայն և իւր ազգը Պարսից հալածանքներից։

Առիթը շուտով ներկայացաւ։ Վախթանգ Վրաց բգեշխը Պերոդի Հեփթաղաց դէմ ունեցած անյաջող պատերազմից օգտուելով՝ սպանեց Վազգէն ուրացող թագաւորին և ապստամբեցրեց Վրաց, որոնք նոյն ծածուկ հալածանքի տակ էին գրտնուում ինչպէս և Հայերը։ Հայոց զօրքը, որ այդ ժամանակ Աղուանից երկրում գումարուած էր Հոնաց դէմ, եկաւ բանակ դրեց Շիրակայ դաշտում, որպէս զի պատրաստուի Վրաց վրայ գնալու։ Բանակի մէջ գտնուած մի քանի նախարարներ, որոնց յայտնի էր Վահանի միտքը, խորհուրդ արին իրանց ընկերների հետ և գիշերով գնացին առաջարկեցին նորան որ Վրաց հետ միաբանի և ապստամբութեան դրօշակը բարձրացնէ։ Խորագէտ Վահանը բացէիբաց մերժեց, պատճառ բռնելով Պարսից զօրութիւնը, Յունաց թուլութիւնն ու նենգութիւնը և Վրաց սակաւութիւնը։ « Բայց ամէնից աւելի դուք ինքներդ ձեզանից վախեցէք, ասաց նա, վասն զի խաբեբայ և անվստահելի մարդիկ էք։ Լաւ է ուրեմն որ այդ բաները թողնէք և ձեր դատարկ խորհրդներով անհանգիստ չառնէք ինձ »։ Այս կծու խօսքերը Վահանի սպասած ազդեցութիւնը գործեցին ներկայ եղողների վրայ։ Բոլորը ոտի կանգնեցան և միաբերան գոչեցին. « Լաւ է մի ժամում մեռնինք՝ քան ամէն օր եկեղեցու և ժողովրդի անարգանքը տեսնենք »։ Այստեղ կրկնուեցաւ Շահապիւլանի տեսարանը. բերուեցաւ Աւետարան և ամէնքը, քրիստոնեայ և ուրացող, Ս. Գրքի վրայ ձեռք դնելով՝ երդուեցան հաստատուն մնալ իրանց խօսքի վրայ։ Բայց այս անգամ էլ գտնուեցաւ մի դաւաճան, ինչպէս և Շահապիւլանում, Վարազ Շապուհ Ամատունին, որ նոյն գիշերը գնաց նախարարների խորհուրդը յայտնեց Ատրվշնասպ մարզպանին։ Այս լուրն առնելով՝ մարզպանը և իւր հետ եղող ուրացողների խումբը ահից

գիշերը անքուն մնացին, առաւօտը վաղ գնացին բանակ դրին Անի ամրոցի մօտ, իսկ գիշերը ապաւինեցան Արտաշատի բերդը, այնտեղից էլ յաջորդ գիշերն անցան Ատրպատական, Հայերն ընկան փախչողների ետևից, ձեռք ձգեցին նոցա բռնաւորուած ձիաները, բռնեցին նոյնպէս Գադիշոյ Խորխոռունուն և բերին մարզպանական քաղաքը Դուին: Այստեղ կազմուեցաւ մի ժամանակաւոր կառավարութիւն, որի գլուխը ընդհանուր հաւանութեամբ կարգուեցան՝ Սահակ Բագրատունին իբրեւ մարզպան և Վահան Մամիկոնեանը իբրեւ սպարապետ (481): Անմիջապէս դեսպան ուղարկուեցաւ Վրաստան դաշն կապելու Վախթանգի հետ, որ խոստանում էր Հոնաց զօրք ուղարկել Հայոց: մի ուրիշ դեսպանութիւն ուղարկուեցաւ Ջեփնոն կայսեր օգնութիւնը խնդրելու:

Սակայն Ատրվշնասպը ուրացեալ հայ իշխաններից դրդուած՝ վճռեց շտապով յետ դառնալ և քանի որ դեռ հայերը լաւ պատրաստուած չէին՝ ապստամբութիւնը իւր բնումը խեղդել: ուստի Ատրպատականից զօրք ժողովելով՝ աճապարեց հասաւ Երասխ գետի ափը՝ Նախիջևանի դէմովդէմը: Հայերը թէև իրանց ոյժերը դեռ չէին հաւաքել, Վախթանգից էլ ըստ խոստման՝ Հոնաց զօրք չէին ստացել, բայց և այնպէս չվհատեցան: Կազմուեցաւ մի փոքրիկ գունդ 400 հոգուց, որ Յովհան Մանդակունի կաթողիկոսի օրհնութիւնն առնելուց յետոյ ուղարկուեցաւ թշնամու դէմ Վասակ Մամիկոնեանի և Բարգէշ Սիւնու առաջնորդութեամբ, որ ուրացող Գդիհնի փոխանակ՝ Սիւնեաց տէր էր կարգուած: իսկ մարզպանը և սպարապետը մնացին Դուին ընդհանուր գործողութիւնների վրայ հսկելու համար: Վարազկերտ գիւղից Վասակ գնաց Պարսից բանակը լրտեսելու և լուր բերաւ թէ նոքա թուով 7000 են: Որոշուեցաւ դաշտից սարի կողմն անցնել, որպէս զի եթէ անյաջողութեան հանդիպին՝ լեռները իրանց ապաւէն ունենան. և գնացին բանակ դրին Մասիսի տակ Ակոռի գիւղի մօտ: Պարսիկները Հայոց քիււորութիւնը տեսնելով՝ կարծեցին թէ խելքները կորցրել, մեռնելու են եկել: Բայց զօրութիւնը միշտ բազմութեան մէջ չէ, Հայոց գնդի ամէն մի զինուորը գիտէր թէ իւր սուրբ իրաւունքների պաշտպանութեան համար էր կռուելու, իսկ Պարսից անկարգ բազմութիւնը ակամայ տեղիցը հանուած

և պատերազմի դաշտը բերուած էր. « Գունդ բազում է՝ բայց յողովք ի նոսա անպիտանք են և քերթաքաղ իշալարեան », ասում էր Վաստկ Մամիկոնեանը Հայոց խրախուսելու համար։ Յարձակումը սկսաւ Պարսից կողմից և թէպէտ հէնց սկզբից Գարջոյլ Խորխոռունին, Գագիշոյի ազգակիցը, թշնամիների կողմն անցաւ, բայց և այնպէս Հայերը քաջութեամբ կռուեցան. նոքա իրանց հարուածները դարձրին նախ Պարսից զօրավարների վրայ, լաւ հասկանալով որ եթէ թշնամիների բանակը անառաջնորդ մնայ, այնուհետեւ հեշտ կը լինի այդ « քերթաքաղ » ամբոխը ցրուել։ Այդպէս էլ եղաւ։ Ատրվշնասպ մորդպանն ընկաւ ուրիշ շատ զօրավարների հետ, և նորա զօրքի մէջ շփոթութիւն ընկաւ. Հայերը քշեցին Պարսից մինչև ձորերն ու քարքարոտ տեղերը։ Գարջոյլը ցրուած զօրքի մի մասը ժողովելով փորձեց ետեւի կողմից Հայոց վրայ ընկնել և յաղթութիւնը յափշտակել։ Բայց Կամսարական եղբայրները վրայ հասան և փախցրին նորան։

Եթէ ինչպէս սովորաբար ասում են՝ մի գործի ելքը առաջին քայլից է կախուած, կարելի է երեւակայել թէ ինչ մեծ ուրախութիւն պիտի պատճառէր Հայոց այս առաջին յաջողութիւնը, երբ յաղթութեան համբաւը տարածուեցաւ Գուլիսի փողոցներում, թէ « Յաղթեց սուրբ խաչի զօրութիւնը և միշտ էլ կը յաղթէ »։ Կաթողիկոսը մարդպանի, սպարապետի և բոլոր ուխտապահների հետ դիմեց մայր եկեղեցին և խուռն բազմութեան ներկայութեանը գոհաբանական մաղթանք կատարեց։

Գ.

Հայոց աշխարհի պէս ցուրտ երկրում ձմեռը ամէն պատերազմական գործողութիւնները դադարում են, և սպարապետը այդ ժամանակը գործ դրեց յաջորդ գարնան համար պատրաստութիւններ տեսնելու։ Նա մարդ ուղարկեց Արծրունեաց, Անձեւացեաց, Ռշտունեաց և Մոկաց նախարարներին, յայտնելով նոցա բոլոր եղելութիւնները և հրաւիրելով որ գան միաբանին իւր հետ խաչի թշնամիների դէմ։ Բայց Վահանի հրաւերը շատ քիչ անձանց սրտում արձագանք գտաւ. միայն Յովհան Անձեւացին և Ներսէս Երուանդունին իրանց սակաւաւոր հեծելազօրն առած՝ գնացին Գուլիս, այն էլ ոչ առանց ընդդի-

մուծիւն գտնելու իրանց ազգակից իշխանների կողմից: Որչափ տարբերութիւն այս և Վարդանանց ժամանակի մէջ, երբ սպարապետի մէկ խօսքի վրայ հազարաւոր Հայեր ամէն կողմից դիմեցին իւր դրօշակի տակ: Նոյնպէս և Վախթանգ իւր իւր խոստովմը կատարելու համար՝ մի տեղից 300 Հոն ժողովեց և ուղարկեց Հայաստան. բայց մի ամսից յետոյ այն էլ յետ կանչեց զանազան պատճառներ բերելով:

Գարնան սկզբին Պարսիկները Ատրնեսեհի առաջնորդ ութիամբ մտան Հեր և Զարեանդ գաւառը. նոցա գլխաւոր ուղեցոյցն էր Գդիհոն Սիւնին: Շտապեցաւ և Վահան իւր զօրքով և մարդպանի ու կաթողիկոսի ուղեկցութեամբ հասաւ հռչակաւոր Արտաղ գաւառը, ուր Հայերը երեսուն տարի առաջ այնպիսի արիւնթեամբ կռուել էին նոյն թշնամիների դէմ և նոյն սուրբ գործի համար: Այստեղ՝ Ներսէհապատ գիւղի մօտ գիշերը հոգեւոր պատրաստութիւնների մէջ անցընելուց յետոյ, առաւօտը վաղ սպարապետը զօրքը կարգի դրեց և հարկաւոր պատուէրները տալով՝ առաջ դիմեց: Պատերազմի սկզբում Հայոց զօրքը Պարսից բուռն յարձակումից շփոթեցաւ, աջ թւեր յետ մղուեցաւ և սկսաւ փախչել: Վահան տեսնելով որ իւր հրամանները լսող չկայ, երեսը խաչ հանեց և Վամարական եղբայրների հետ ընկաւ Պարսից վրայ, շարժեց, դղրդեց նոցա բանակը և անհնարին կոտորած գործեց նոցա մէջ: Այս տեսնելով փախստականները օիրտ առին, դարձան ընկան փախչող թշնամիների վրայ: Յաղթութիւնը կատարեալ եղաւ: Պարսիկները ցրուեցան պատերազմի դաշտի վրայ անհամար սպանուած ու վիրաւոր թողնելով: Մինչ Հայք յաղթութեամբ և աւարով վերադառնում էին կաթողիկոսի օրհնութիւնն առնելու, բանակի մէջ ձայն տարածուեցաւ թէ սպարապետի եղբայրը՝ Վարդբանտից ազատուելով Պարսկաստանից եկաւ իւր ծառաների հետ (482):

Արտաղից Հայոց զօրքը գնացել էր Մաղկոտն գաւառը փոքր ինչ հանգստանալու, երբ Վախթանգից դեսպան եկաւ դաշնակից Հայոց օգնութիւնը խնդրելու Պարսից դէմ, որոնք Միհրանի զօրավարութեամբ արշաւել էին Վրաց երկիրը, և թագաւորը չկարողանալով դէմ դնել, փախել ապաւինել էր Հայոց սահմանակից լեռները. դեսպանը հաւատացնում էր թէ մինչ-

չև Հայոց գալը Հոնաց գուճաճի էլ կըհասնի: Հայերը առանց ժամանակ կորցնելու՝ գնացին բանակ դրին սահմանագլխի բարձրութիւնների վրայ, որտեղից Վախթանգ խաղէական խօսքերով քաշեց տարաւ նոցա ճարմանայնի դաշտը՝ Կուր գետի ափին, ուր իբրև թէ Հոնք սպասում էին Հայոց: Բայց Հոնաց տեղ շուտով եկաւ Միհրան իւր զօրքով և Կուր գետի միւս կողմը կանգ առաւ: Վախթանգի խարդախութիւնը աշկարայ եղաւ, բայց էլ ճար չկար: Հարկ էր պատերազմ տալ Պարսից ահագին բազմութեանը, որոնց զօրապետին Հայոց գնդի մի մասը առաջուց խօսք էր տուել կռուի դաշտից յետ քաշուելու: Վահան, որից այս դաւաճանութիւնը ծածուկ էր մնացել, իւր սուլորական քաջութեամբ Կամսարական եղբայրների հետ յարձակեցաւ Պարսից վրայ, մինչ սոքա Կուր գետն անցնում էին, և մեծ կոտորած արաւ նոցա մէջ: Բայց այդ միջոցին Հայոց և Վրաց զօրքի մի մասը երեսները դարձրին և սկսան փախչել նենգութեամբ կանչելով. «Հայերը փախան, գլուխներդ ազատեցէք»: Այս աղաղակը պատերազմող զօրքի մէջ այնպիսի խառնակութիւն ձգեց, որ ամէնքն առհասարակ փախչող փախչողի եղան: Պարսիկներն ընկան Հայոց և Վրաց ետեւից և շատ մարդկոտորեցին նոցանից: Այս դժբաղդ ճակատամարտում Հայերը մեծ կորուստ ունեցան: Սահակ մարզպանը և Վասակ Մամիկոնեանը սպանուեցան, իսկ Հրահատ Կամսարականը և Յազդ Սիւնին գերի ընկան:

Այնուհետև պիտի սկսէին Վահանի բուն դժուարութիւնները, որոնց մէջ ակնյայտնի փայլեցան նորա աչալըջութիւնը, անլիհերութիւնը և ռազմագիտական ընդունակութիւնը: Զրկարողանալով այլ ևս արձակ դաշտում պատերազմել, առանց զօրքի և միայն փոքրիկ խմբեր ունենալով իւր ձեռքի տակ, արտաքին և ներքին թշնամիներով չըջապատած, շարունակ տեղէ տեղ փոխուելով որ մի թակարդի մէջ չընկնի, ցերեկը հանգիստ և գիշերը քուն չունենալով, այս զարմանալի մարդը իւր յանկարծական յարձակումներով անդադար յոգնեցնում ու թուլացնում էր Պարսից բանակները, մինչև որ վերջապէս ահ ու սարսափ ընկաւ թշնամիների վրայ: Ինչ աւելի գեղեցիկ վկայութիւն կարող է լինել այդ մասին քան Պարսիկ զօրավարներից մէկի խոստովանութիւնը, թէ «Վահանի գործերը այս ժամա-

նակի մարդկանց գործերի նման չեն, այլ հին հերոսների սխրագործութիւնների նման, որ վէպերի մէջ են պատմուած և միայն լսելով գիտենք ։

Ճարմանայնի կռուից յետոյ՝ Միհրան իւր բոլոր զօրութեամբ ընկաւ Վահանի ետեւից, որ Տայոց կողմերն ապաւինած՝ հազիւ հարիւր մարդ ունէր իւր հետ։ Յուսալով որ նա առանց ընդդիմութեան անձնատուր կըլինի, բանակցութեան մէջ մտաւ նորահետ։ Բայց այդ միջոցին Միհրանին հրաման եկաւ Պարսկաստան գառնալու, և նա ճանապարհ ընկաւ՝ գերիները հետը տանելով։ Բագաւանի մօտ Հրահատ Կամնարականը յաջողեցաւ ազատուիլ Պարսից ձեռքից, և Միհրան նորանից վրէժ առնելու համար՝ Յազդ Սիւնուս գլխատեց։

Դարձաւ Վահան Այրարատ իւր փոքրիկ գնդովը և էջմիածնի տաճարում Աստուծոյ գոհաբանութիւն մատուցանելուց յետոյ՝ գնաց Դուին ձմերելու։ Դարնան օրերը բացուելուն պէս՝ Ջարմիհր՝ Հազարաւուխտ մեծ բանակով մտաւ Հայաստան և ուխտանենք նախարարների թելադրութեամբ ուղիղ Դուինի վրայ գնաց, որովհետեւ Հայոց զօրքի մի մասը խաբեբայ անձանց խօսքով և Վահանի կամքի հակառակ գնացել էր Վրաստան, ուր իբրեւ թէ Սահակ մարդպանը և Վասակ Մամիկոնեանը ողջ էին և իրանց ազգակիցների օգնութեանն էին սպասում։ Վահան իւր խմբով ճեղքեց Պարսից բանակը և գնաց դարձեալ Խաղտեայ կողմերն ապաւինեցաւ։ Հազարաւուխտ կառաւած ընկաւ նորա ետեւից՝ ճանապարհին աւեր ու կոտորած գործելով։ Հասաւ մինչև Շաղագոմ գաւառը՝ Յունաց բաժնի Հայաստանում, ուր լքտններից տեղեկացաւ թէ Վահան Վարայվարոյ գիւղում մի յոյնի տանն էր գտնուում։ Բայց այնտեղ գտաւ միայն Կամնարականաց կանանցը, որոնց պատուով պահեց իւր բանակում, յուսալով որ նոցա ձեռքով կըկարողանայ Վահանին կամ գէթ Կամնարականներին որոալ։ Եւ ինքը դարձաւ եկաւ Բասեան գաւառը։ Այստեղ Դուինց հրաման եկաւ Հազարաւուխտին, որ երթայ Վրաստան և չթոյլ տայ Վախթանգին միանալու Հեփթաղաց հետ, որոնց վրայ արշաւում էր Պերոզ։ Իսկ իւր տեղը Հազարաւուխտ թողեց Շապուհ Միհրանեանին, օգնական տալով նորան Գդիհոն Սիւնուս իւր զօրքով։

Վահան այս նոր զօրավարին էլ երկար ժամանակ խաղացրեց՝

անակնկալ յարձակումներով վնասելով նորա գնդերին, որոնք այս ու այն կողմը ցրուած՝ զուր աշխատում էին բռնել նորան։ Արշամուկնեաց գաւառի նրէզ գիւղումն էր, որ յանկարծ իմացաւ թէ Շապուհ իւր բոլոր զօրքով մօտենում է նոյն գիւղին։ Հնարագէտ Վահանը հաւաքեց նրիզացիներին և իւր գնդի հետ խառնելով՝ գիշերով յարձակեցաւ Պարսից բանակի վրայ և այնպիսի շփոթութիւն ձգեց թշնամիների մէջ, որ նոքա սկսան միմեանց կստորել, իսկ ինքը անվնաս գնաց Շտէ գիւղի գոմերում գիշերուայ մնացած մասը հանգստանալու համար։ Առաւօտը տեսաւ որ Շապուհ ետեւից հասել է, ժողովեց իւր փոքրիկ գոհնդը, մի քանի քաջաւերական խօսքեր ասաց և մինչ կամենում էր յարձակուիլ, շատերը վհատած թողին ու փախան։ մնացել էին միայն Կամսարական եղբայրները 40ի չափ ընկերներով։ Խմբից մէկը ձայն տուեց. « Զգոյշ եղիր, տէր, անձը պահպանէ » : — « Ել զգոյշ լինելու ժամանակ է », կանչեց Վահան, և երեսը խաչակնքելով առաջ վազեց։ Հաւատարիմ խումբը հետեւեց նորան, ճեղքեց անցաւ ապշած Պարսից միջով աջ ու ձախ մահ ու սարսափ սփռելով։ Ընկածների մէջ էր և հպարտ Գրիհոն Սիւնին, որ պարծենում էր թէ « ես Վահանին և բոլոր այդ Հայոց հետ ոչ թէ նետով կը կռուիմ, այլ նետիս կոթովը բոլորին կը ցրուեմ » :

Շապուհ վհատեցաւ, նա վախեցաւ մանաւանդ որ չլինի թէ Վահան Յուդայաց Բաթնի Հայ իշխաններից օգնութիւն գտնէ և խոհեմութիւն համարեց յետ քաշուիլ։ Բասեանի Ալվար գիւղը որ հասաւ, դեսպան եկաւ յայտնելու նորան Պարսից մեծ անյաջողութիւնը Հեփթաղաց արշաւանքի մէջ, ուր և Պերողթագաւորը սպանուել էր, և ինչպէս Հազարաւուխտ Վրաստանից, այսպէս և Շապուհ Հայաստանից կանչուում էր պետական խորհրդին ներկայ լինելու համար։ Շապուհ Կամսարականների կանանցը յանձնեց Բողբերդ ամրոցի բերդակալի պահպանութեանը և ինքն իւր զօրքով դարձաւ Պարսկաստան։ Այսպիսով Հայաստանը դարձեալ Վահանի ձեռքը մնաց։ Վաղարշապատում սովորական մաղթանքները կատարելուց յետոյ՝ նա գնաց Դուին, որտեղից ուշադրութեամբ հետևում էր Պարսկաստանի անցքերին (483)։

Դ.

Պարսից մեծամեծների ժողովը գոռոզ Պերոզի տեղ գահի վրայ բարձրացրեց նորա հեզ ու խաղաղասէր Վաղարշ եղբօրը։ Նորընտիր թագաւորի առաջ մանրամասնօրէն ներկայացրին Հայոց երկրի հանգամանքները, ապօտամբութեան պատճառն ու հետեանքները, և նա Նիխոր Վշնասպազատ իշխանին յանձնեց գնալ Հայաստան և Վահանի հետ հաշտութիւն անել։ Եկաւ Նիխոր զգուշութեան համար հետը զօրք բերելով, և չլստահանալով երկրի ներսերը մտնելու՝ կանգ առաւ Հեր գաւառի Նուարսակ գիւղում։ Այստեղից պատգամաւոր ուղարկեց Դուին իւր գալստեան նպատակը յայտնելու։ Վահան խորհրդի հրաւիրեց իւր հաւատարիմ ընկերներին և նոցա հաւանութեամբ հաշտութեան պայմանները հետեւեալ երեք կէտերի մէջ ամփոփեց.

1. Քրիստոնէութիւնը Հայոց աշխարհի օրինաւոր կրօնը պիտի ճանաչուի, ոչ մի հայ մարդ չպիտի բռնադատուի կրօնափոխ լինել և ոչ ոքի հաւատութեան համար մեծութիւն և իշխանութիւն չպիտի տրուի։
2. Արժանաւոր ու անարժան անձանց մէջ խտրութիւն պիտի լինի, անպիտան ու վնասակար մարդիկը հեռու պիտի պահուին և լաւերն ու օգտակարները առաջ պիտի քաշուի։
3. Թագաւորը ամէն ամբաստանութիւններին չպիտի հաւատայ, այլ ինքն անձամբ պիտի քննէ ամէն բան և այնպէս դատաստան անէ։ «Եթէ այս պայմանները կընդունիք, ասաց Վահան պատգամաւորներին դառնալով, կը հաշտուինք ձեզ հետ և դարձեալ կըհնազանդինք ձեզ. իսկ եթէ չէք ընդունիլ, պատրաստ ենք մինչև մեր վերջին շունչը կռուելու, և աւելի ուրախութեամբ կըմեռնինք քան պարսիկ մարդու առաջ գլուխներս կը խոնարհեցնենք»։

Նիխոր ուրախութեամբ ընդունեց հաշտութեան նախապայմանները և Վահանին իւր մօտ հրաւիրեց վերջնական դաշը կնքելու համար։ Սպարապետը ուխտապահ նախարարների և զօրքի հետ գալով Արտազ գաւառի Եղինդ գիւղը, Նիխորից պահանջեց ու ստացաւ նշանաւոր պատանդներ, և ապա դիմեց պարսկական բանակը պատերազմական փողերը հնչեցնելով։ Պարսիկներն այլալեցան, կարծելով թէ Վահան խաբէութեամբ պատերազմելու է դալիս։ Առաջ եկան հրաւիրակներ,

Նիխորի կողմից, հասկացնելով նորան թէ միայն Արեաց սպարապետը իրաւունք ունի փողեր հնչեցնելով բանակը մոռնել: « Դու մէկ առաջ ինձ Արեաց Թագաւորին հպատակ արա, պատասխանեց խորխոտ Մամիկոնեանը, յետոյ առանց քո ասելուդ՝ ես ինքս էլ լաւ գիտեմ ձեր երկրի կարգն ու կանոնը: Այս գործողութեամբ ու պատասխանով Վահան ուղեց զգացնել Նիխորին, թէ ինքը գալիս է իբրեւ ազատ մարդ հաշտութեան պայմանների վրայ բանակեցելու, և ոչ իբրեւ ստորագրեալ հրամաններ ընդունելու: Նիխոր մեծ պատուով ընդունեց Վահանին և նորա ուխտակից ընկերներին, փառաւոր հացկերոյթ տալով նոցա, մինչդեռ ուխտանենքները դուրսը կանգնած մնացին ամթահար: Եւ ինչպէս պատմագիրն ասում է, սոքա՝ թէ հնար լինէր, մեծ գնով կը գնէին ապստամբութեան անունը: Վասն զի ուխտապահները ներս թողնուելու համար՝ հետեւեալ նշանաբանն էին ընտրել, որ բարձրաձայն ասում էին նուիրակներին, թէ « ես էլ ապստամբների գնդիցն եմ: » Հաշտութիւնը Վահանի ուղածին պէս կայացաւ և երկու կողմն էլ գոհ սրտով բաժանուեցան միմեանցից (181):

Ի՛նչ յետոյ Վահան անձամբ ներկայացաւ Վաղարշին և նուրասակի դաշնադրութեան հաստատութեան հետ ստացաւ նաև Մամիկոնեան տոհմի տանուտէրութիւնը և Հայ զօրքի սպարապետութիւնը: Անդեկան Պարսիկը, որ նոյն տարին մարզպան ուղարկուեցաւ Հայաստան, առտջարկեց Թագաւորին մարզպանութիւնը առաջուան պէս Հայ մարդու յանձնել, որ օտարից լաւ է ճանաչում երկրի բոլոր կարօտութիւնները, մանաւանդ երբ Վահանի պէս խելացի ու արդարասէր մարդ կայ, ասում էր նա, անյարմար է ուրիշ մարզպան նշանակել: Վաղարշ համոզուեցաւ և մարզպանութեան իշխանութիւնը հրովարտակով յանձնեց Վահանին: Արքունի հրովարտակը ստացուելուն պէս՝ Վահան բոլոր նախարարների հետ եկեղեցի դիմեց Աստուծոյ փառաբանութիւն մատուցանելու համար, և Յովհան կաթողիկոսը խուռն բազմութեան ներկայութեանը մի հոգելից ճառ խօսեցաւ, որով շնորհաւորում էր ուխտապահներին իրանց տարած յաղթութիւնը և յորդորում էր նոցա ներողամիտ լինել և գթութեան ձեռք կարկառել ուխտանենքներին (185):

Վահան 25 տարի կառավարեց Հայաստանը մարզպանական

իշխանութեամբ. բայց այդ քառորդ դարը բոլորովին անվրդով չանցաւ իւր և Հայոց երկրի համար: Վաղարշի յաջորդը Կաւատ, արիւնարբուն Պերողի որդին, մոգերի դրդմամբ իւր նախորդի տուած արտօնութիւնները ջրեց և նոր հալածանք հանեց Հայոց դէմ: 493 ին Հայաստանը վերստին լցուեցաւ մոգերով, որոնք եկան կրակատուններ շինելու և մոգութեան ուսուցման սերմանելու Հայոց մէջ: Վահան պարտաւորուեցաւ միւսանգամ դէնք առնելու այն սուրբ գործի համար, որի պաշտպանութեամբ նուիրել էր իւր կեանքի ամենալաւ տարիները: Նախարարների հետ միաբանած՝ դուրս եկաւ Պարսից դէմ, զօրքն ու մոգերը կոտորեց և կրակատունները կործանեց: Կաւատ զոյրացած՝ պատրաստուով էր անձամբ արշաւել Հայաստան, բայց քաղաքական դէպքերը սախպեցին նորան հաշտութիւն անել Հայոց հետ և նոցանից օգնութիւն առնելով գնալ Յունաց վրայ, որոնք կամենում էին նորից հաստատուել Միջագետքում: Այնուհետեւ Սասանեան թագաւորները մի քանի անգամ փորձեր էլ արին Հայաստանի քրիստոնէութիւնը կրակապաշտութեան փոխելու, մինչև որ վերջապէս էրդ դորում Պարսկաստանն էլ, Հայաստանն էլ մահմետական Արաբացւոց իշխանութեան ներքոյ ընկան:

Ե.

Եթէ այժմ յետ դառնանք և Երդ դարի կրօնական պատերազմի վրայ մի ընդհանուր ակնարկ ձգենք, մեծ տարբերութիւն կը գտնենք այս մեծ ճգնաժամի երկու շրջանների մէջ: Մինչ Վարդանանց օրով ազգի մեծագոյն մասը քրիստոնէութեան գաղափարով ոգևորուած՝ պատրաստ էր ամէն զոհողութիւն յանձն առնել Եկեղեցու փրկութեան համար, Վահանեանց ժամանակ ընդհակառակն այդ ոգևորութիւնը անտարբերութեան փոխուած, մարդկանց որտեքը բոլորովին սառած էին: Այնտեղ տեսնում ենք 60,000 հոգի Աւարայրի դաշտում խմբուած՝ պատրաստ իրանց պաշտօնորդի հետ կեանքերը կրօնի և ազգի վրայ դնելու. իսկ այստեղ նոյն իսկ Ակոռու և Ներսէսապատի յաղթութիւնները անզօր են լինում ազգը իւր թմրութիւնից զարթեցնելու: Իսկ երբ Վրաստանի դժբաղդ պատերազմը տեղի ունեցաւ, էլ այնուհետեւ Վահան մենակ մը-

նոց և գործի բոլոր ծանրութիւնը իւր ուսերի վրայ տարաւ։ Ի՞նչ հոգեկան արիւնթիւն։ Ի՞նչ երկաթի կամք պիտի ունենար այդ մարդը։ որ մի բուռն հաւատարիմ քաջերով Պարսից զօրաւոր գնդերի դէմ մաքառեց) և մաքառեց տարիներով։ մինչև որ վերջապէս յուսահատեցրեց նոցա և ստիպեց հակառակորդին զիջանել։ Ահա այստեղ է երեւում Վահանի մեծ նշանակութիւնը։ Եթէ մի ուրիշը եղած լինէր նորա տեղը այդպիսի ձախորդ պայմանների մէջ կամ ամենեւին գործը չէր սկսիլ, կամ սկսելուց յետոյ կը վճատէր ու ասպարիզից կը քաշուէր, և այն ժամանակ ամէն ընդգիմութիւն կը վերջանար։ Այս բանը շատ լաւ էին հասկանում պարսիկ զօրավարները, ուստի և նոցա բոլոր ջանքն այն էր՝ որ Վահանին կենդանի կամ մեռած ձեռք ձգեն։ «Գաւնդ զօրացն Պարսից ոչինչ փոյթ առնէին այլոցն, զկնի զօրավարին Հայոց Վահանայ անցանէին»։ քանզի տեսէին, թէ նմա միայն գտանեմք հնարս՝ ամենայն իրք մեր վճարեալ են և յանդ»։

Ի՞նչ կը լինէր Պերոզի հանած և Կաւատի նորոգած կրօնական հալածանքը, եթէ Վահան Մամիկոնեանի դիմադարձութիւնը եղած չլինէր։ Հաւանականաբար այս երկուսից մէկը ազգը կամ Պարսից հզօր ճնշմանը տեղի տալով, ինչպէս որ տեղի էին տուած արդէն նորա մեծամեծներից շատերը (և յայտնի է որ սովորաբար ժողովուրդը իւր մեծերին է նայում), վերջ ի վերջոյ արքայից արքայի կամքը կը կատարէր. կամ որ աւելի հաւանական է, քրիստոնէութիւնը պահելու համար՝ Յռնաց կայսրների պահանջած դաւանաբանական զիջումները կանէր և նոցա օգնութեամբ կաշխատէր Պարսից բռնութիւնից ազատուիլ։ Աւելի հաւանական ենք ասում մանաւանդ այն պատճառով, որ ինչպէս յայտնի է՝ Զրդ դարուց Սասանեան թագաւորութիւնը սկսում է տկարականալ, և ընդհակառակն Բիւզանդական կայսրութեան ազդեցութիւնը հետզհետէ զօրանում է Արեւելքում։ Այս երկու ճանապարհներից որն էլ ընտրէր ազգը, հաւաստրապէս աղէտալի ելք կ'ունենար նորա համար։ Եթէ Սասանեան թագաւորների դարեւոր ջանքերը յաջողութեամբ պսակուած լինէին, Հայ ազգը կը ձուլուէր Պարսից հետ և նոցա հետ մահմէտականութեան ու վիլիանոսի մէջ կընկըմէր։ Իսկ եթէ Յռնաց միջամտութիւնները յաջողած լի-

նէին, Հայ Եկեղեցին կրկորցնէր իւր ինքնուրոյնութիւնը, և և կրօնական ինքնուրոյնութեան հետ Հայերը կրկորցնէին նաև իրանց ազգային ինքնուրոյնութիւնը և կըլուծուէին յունական տարրերի մէջ, ինչպէս որ պատմութիւնը ցոյց է տալիս այն Հայոց համար, որոնք Քաղկեդոնի ժողովը ընդունելով՝ ազգի ընդհանրութիւնից անջատուած և Յունաց եկեղեցուն յարած են:

Ընդհանրապէս առնելով, Երզնքայի կրօնական պատերազմը իւր կնիքը դրոշմեց Հայոց ապագայ կեանքի վրայ: Նա գտնեց այն ճանապարհը՝ որով այնուհետև պիտի ընթանային Հայերը, ցոյց տուեց նոցա թէ Եկեղեցին է իրանց փրկութեան միակ խարիսխը, թէ նորան պէտք է պինդ պահեն՝ եթէ ուզում են իրանց գոյութիւնը շարունակել իբրև առանձին ազգութիւն: Այս ճշմարտութիւնը լաւ հասկացաւ ազգը, ուստի և երախտագէտ սրտով պահեց Եկեղեցուն պանծալի ախոյեանների յիշատակը: Բայց այդ երախտագիտութիւնը կատարեալ լինելու համար՝ Աւարայրի նահատակների հետ պէտք է յիշել նաև Ներսէսապատի քաջերին, Վարդանի անուան հետ կապել Վահանի անունը, վասն զի ինչ որ մեծ Հօրեղբայրը սկսեց, նոյնը յաջողութեամբ գլուխ տարաւ Նորա արժանաւոր Նղբօրորդին:

ՍՏ. ՊԱԼԱՍԱՆԵԱՆ

Ահա արդէն մի դարից աւելի է, որ Հայ ազգի նշանաւոր մասը մտած է Ռուսաստանի հպատակութեան ներքոյ: Բայց Ռուս ազգի գրականութիւնը շատ աղքատ է կարևոր և ճիշդ տեղեկութիւններով Հայոց մասին: Նաև հազուադէպ են գրուածքներ Ռուսերէն լեզուով՝ որոնք ծանօթացնել կարողանային Ռուս ազգին Հայերի անցեալն և ներկայն այն ճշդութեամբ, որ անհրաժեշտ է ամեն միմեանց հետ ապրող և յարաբերութիւն ունեցող ազգերի համար: Արևմտեան եւրոպական պատմական և ազգագրական գրականութիւնը շատ աւելի հարուստ է գրուածքներով Հայերի մասին, քան ռուսականը. մինչդեռ հակառակը պիտի լինէր, քանի որ Ռուսաստանն ունի մի միլիոնի չափ հպատակ Հայ, որոնք նորա նշանաւոր գաւառներում մեծ գեր են կատարում թէ իբրև երկրագործներ ու